

ՊԱՐՄԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ

# Ս Ա Ա Ռ Ո Ւ ի ց

(Պատմուածի)

Մի Դամասկացի ճգնաւոր շատ տարիներից ի վեր ազօթում էր անտառում եւ ապրում էր ծառիկի տերեւներով : Այն երրիբ թագաւորն ուխտի գնաց նրան եւ ասաց . « Թէ կը հածիս , արք՝ քաղաք . քեզ մի աշնակիսի բնակարան տամ , որ աւելի խաղաղ ապրիս եւ ազօթես աւելի եռանդով : Թող ուրիշներն էլ քո սուրբ չնչի օրնութեամբ երջանիկ եւ քո բարի գործերին հնառուող լինին » : Մենակեացը չէր ընդունում : Նախարարներն ասացին . « Թագաւորի խօսքը մի՛ կոտրիր . լաւ կը լինի , գաս , մի քանի օր մնաս քաղաքում , տեսնես ի՞նչպիսի տեղում ես ապրելու . եթէ սուրբ եւ անքիծ ժամանակդ արատաւորուի ուրիշների խօսքերից . կամքը բռնն է , կարոյ ես էլի վերազառնալ » :

Ճգնաւորը գնում է քաղաք . թագաւորը նրա համար զարգարել է տալիքի իր սեփական գըղեակը , մի գղեան՝ կամ տեսնողի սիրան էր զուրաթացնում ուրիշների խօսքերից . կամքը բռնն է , իսկ գղեակի շուրջը՝ պարտիզում » :

Կարմիր վարդելին իբրեւ այսեր գեղութիւն , Սմբուները մի մի գանգուր սիրութիւն՝ Քամուն ծեռից , որպէս մանկունք կաթնկեր , Գետնին հակած իրենց երկուտ գլխիկներ , Նրանց վըրայ կոլոնները նուննեաց՝ Մի մի կըրակ դալար ծառոց փաթաթիւած :

Թագաւորն անմիջապէս նրա մօտ ու զարկեց մի գեղեցկագէմ գերուէի :

Նայի՛ր լուսնագեղ այդ իցրապուրչին , Զարդով սիրամարգ , դէմքով իրեշշտակին . Մը ապաշխարող ճգնաւորն է ան , Որ տեսնէ նրան , սանձ դընէ կըրքին :

Նրա գեղեցկութեան մի հարուածից մարդու բազուկն էր կոտրուում եւ զգայունների ժուռւ կալութեան ձեռները կապուում քամակին :

Տնինուղիները ջարդըւում են ծարաւից , Խսկ նա ջնկիթ տեսնում է , ջուր չի տալի . Անյա՞գ աչեր , չէք կշտանում նորանից , Որպէս ջրգողն ակոնքներից եփրատի :

Ճգնաւորն սկսաւ ուտիլ համեզ կերակուրներ ու տեսակ տեսակ մրգեր , հագնել վայելուչ շորեր , օծուիլ անուշանոս իւղերով եւ ճաշակել գերունու զեղեցկութեան քաղցրութիւնը : Սո՞ւու է միթէ , որ իմաստուններն ասում են . Գեղեցկի գանգուրը շղթայ է խելացու սախն եւ թակարդ է խորամանկ թռչունին :

Զոինցի սիրուս ու կրօնս քիզ իսմար , Խո թուշնակլը , զու թակարդս եղար . Վերջացան օրենս , օրերս սրբութեան , Օրերս աղօթքի , եւ դո՞ւ ես պատճառ :

Ի զուր չեն ասել .

Թէ՛ խրատ լսող , Թէ՛ մարդ խըրատող , Թէ՛ լինիս ազամ լեզուից խածատող . Հենց որ դըննս սուդ աշխարհ փըրչացած , Կը լինիս մի ճանճ մեղրի մէջ թաղուած :

Անցաւ օրեր , եւ թագաւորն ասաց՝ Գնամ տեսնեմ ճգնաւորիս : Դնաց , եւ ի՞նչ տեսնէ . ճգնաւորն առաջուած ճգնաւորը չէր մնացել . Երեսները կարմրել էին ու սիրազակել , ինքն էլ մի լաւ գիրացել էր . զլուխն յենել էր փետրալից կակուլ բարձին եւ ոգեստիք էակն էլ սիրամարգի պէս գարգարուն կանգնել էր կողքին , Թագաւորը թէ՛ֆն եկաւ :

Նստաւ , գէսից գէնից բաւական խօսելուց յետոյ ասաց . Աշխարհում մէկ կարգացողներին եմ շատ սիրում են , մէկ ճգնաւորներին : — Ներկայ եղող նախարարներից մին աշխարհ ման եկայ մի փիլիսոփայ էր . ասաց . Տէ՛ր արքայ , թէ սիրում են , մի մի բարիք արա գրանց : — Ի՞նչ բարիք , հարցրեց թագաւորը : — Կարգացողներին , ասաց , ուկի տուր , որ գնան ուրիշներին էլ կարգացնեն . ճգնաւորներին ոչինչ մի տալ որ ճգնաւոր մնան :

ձգնաւորին ո՞չ ոսկի տուր ո՞չ դենար ,  
 թէ չէ՛ ծեռք բեր այլ ֆջնաւոր քեզ համար :  
 ձգնաւորին պէտք եղածն է աղօթք եւ սէր  
 հոգեւոր ,  
 Ոսկի , կըտակ թէ հոգեխաց այնքան էլ չն  
 կարեւոր .  
 Մատուցած կոյսին պէտք եղածն է քնիոյշ երես ,  
 նուրբ մատներ ,  
 Եափիւղայից օլ , մատանիք չն յուգելու ձեր  
 սրտեր :

Թող լինի դէրվիշն ազնիւ եւ բարի ,  
 Հոգ չէ թէ մարդկի հոգեխաց ըստան .  
 Թող լինի կոյս դէմքող գեւանի ,  
 Հոգ չէ թէ մատին մատնիք չըշողան :

Խոկ ես որ ունիմ գանձեր անսահման ,  
 Արժան շմբ այլ եւս գնաւոր անուան :  
 (Գիւլիստան)

### ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ ՍԱՍԴԻՒՑ

**Ա**սամ ծուղակը կոր խոպաններդ հն(1)  
 Աչացըս կապանքն էդ նազ աւերդ հն .  
**Ա**ւա չէ , մի՛ պիպար շատ էլ նազէ նազ .  
 Զար աչիր շատ կան , քեզ կը վաստեն :  
 Կամ ծածկիր երեստ , աչովլ քեզ չը տան ,  
 Կամ սպանդ(2) ծխիր հուր դէմքիր վրան ,  
 Ով , իմ հրիշտակ , գժիք քո սիրուց .  
 Է՛լ չի ուղղւիլ , ինչքան խրատ տան :

Դանացաւ բերանս սիրուդ պատուից ,  
 Ի՞մ շաքարշուրիթ , մի՛ շաքար տուր ինձ .  
 Դո՞ւ ումն ես ուղղում նմանիլ , նո՞ի ,  
 Ինչքան էլ աճիս , ցածր ես եաղութից :

Լալիս եմ յուսովլ , մինչ թշնամիքըս ,  
 Տնսէ՛ք , ծաղրում են յոյս ու լալիքը .

(1) Բն. — « Խոպաններդ մէն մի կորացուաթը մի ոզակ է » , օպակ , որ նեռուց զցում են հակառակորդ գիրն և , որպէս կարուկ , քաջ տալիք նրան :  
 (2) « Սպանդ » (Յուրբե լուզերիլ) , մի անակ սերմ , որ նախապաշտուած ամբողջ ծառու իրեւ ապահով միջոց չար աչքից անփաս մալու համար :

Ա՛խ , ո՞ւր ես , եա՛ր ջան , ո՞ւր ես , մէկ արի .  
 Տեսնեն , ամաչեն կոյր թշնամիքըս :

Գո՞հ ես , որ այսպէս յանկարժ , հայելեան՝  
 Դարդւորիս ա՛խը քեզ հանի մննակ .  
 Եա՛րար , ո՞ւր էր թէ խղճար գէթ մի հեղ ,  
 Զգէր իմ վրա մի զթոս ակնարկ :

Կեանքումըրի քանի՞ օր կար բարելից ,  
 Եւ այսուհետեւ ո՞վ ինձ կարեկից .  
 Ա՛րդ , նստիմ տեղս ու լուռ , համբերաստար  
 Հետամուտ լինիմ գործիս անդադար :

Անց կացան օրերս եւ անցան , աւա՛զ ,  
 Սիրա , համբերութիւն ու եարըս չքնազ .  
 Ես կամաւ չանցայ , բայց էն անզգամն  
 Անց կացաւ կամաւ , էն էլ ինչքան վազ :

Մինչեւ ձեռք թիրի , սրտիկս հուր անցաւ ,  
 Բայց նա հովի պէս եկաւ ու անցաւ .  
 Ա՛խ , թէ էս ցաւին չգտնեմ ընկեր ,  
 Ո՞ւր պիտի համնին իմ դարդն ու իմ ցաւ :

Ուղրմի՞ր նրան , ում տեսնում ես որ  
 Սիրուն համբերելու դառել է անզօր .  
 Թո՞զ նրան , թո՞զ , ով զլուխն օծի պէս  
 Բարելի տակն է քաշում վիրաւոր :

Ես խորունկ ծովից նա՛ հոգին փրկեց ,  
 Ով զնաց գանց ծովափին զրեց .  
 Ես բնակիչն եմ սիրոյ սուրբ հողի ,  
 Ինձ քշողն ո՞վ է , տեսնեմ ի՞ր ծնւեց :

Սիրոյ միակ ճարն անճարութիւնն է ,  
 ի՞նչ ունես , որ եարդ քեզ չարչարում է .  
 Ա՛րդ , նստիմ տեղս ու լուռ համբերաստար  
 Հետամուտ լինիմ գործիս անդադար :

Ով ուղբերիդ տակ զլուխ յծոեց ,  
 Երեսիդ քոյզ մի՛ կողմ չզրեց .  
 Ուզին կորցրեց ու քեզ չասաւ  
 Էս թանիկն որ թեւն ի սուր չըրեց :